

Կալիֆոռնիայում այցելությունների էլեկտրոնային ստուգման (EVV) ծրագրի առաջիկա փոփոխությունները Հաճախակի տրվող հարցեր

Ի՞նչ է այցելությունների էլեկտրոնային ստուգումը (EVV):

Այցելությունների էլեկտրոնային ստուգումը (EVV) դաշնային օրենք է, որն ընդունվել է Կոնգրեսի կողմից 2016թ.-ին, որը պահանջում է, որ իրենց հաճախորդների հետ **չբնակվող** IHSS-ի մատակարարները (խնամակալները) էլեկտրոնային եղանակով փաստագրեն նահանգի էլեկտրոնային ծառայությունների պորտալի (ESP) կամ հեռախոսային ժամանակացույցի համակարգի (TTS) միջոցով հետևյալ տեղեկությունները՝

- 1) Կատարված ծառայության տեսակը
- 2) Ծառայությունը ստացող անհատի տվյալները
- 3) Ծառայության ամսաթիվը
- 4) Ծառայությունների մատուցման վայրը
- 5) Ծառայությունը մատուցող անհատի տվյալները
- 6) Ծառայության սկզբի և ավարտի ժամանակը

Ինչպե՞ս է աշխատում Կալիֆոռնիայի ներկայիս այցելությունների էլեկտրոնային ստուգման համակարգը:

Ներկայումս IHSS մատակարարից պահանջվում է փաստագրել ծառայությունը սկսելու ժամը, ավարտելու ժամը և գտնվելու վայրը (տուն, համայնք կամ երկուսն էլ) իրենց էլեկտրոնային ժամաթերթի տրամադրված դաշտերում՝ ETS պորտալի միջոցով: Այնուամենայնիվ, չի պահանջվում այդ տվյալների դաշտերը լրացնել իրական ժամանակում՝ յուրաքանչյուր հերթափոխի սկզբում և վերջում:

Որո՞նք են այցելությունների էլեկտրոնային ստուգման համակարգի առաջարկվող փոփոխությունները և ի՞նչ վրա են դրանք ազդում:

2023 թվականի հուլիսի 1-ից սկսած՝ իր հաճախորդի հետ **չբնակվող** մատակարարը պետք է մուտք գործի համակարգ՝ ծառայությունը սկսելու ժամին և այնուհետև դուրս գա համակարգից՝ ծառայության վերջում՝ օգտագործելով IHSS-ի EVV բջջային հավելվածը, էլեկտրոնային ծառայությունների պորտալը (ESP) կամ հեռախոսային ժամանակացույցի համակարգը (TTS): Եթե նրանք նշում են, որ ծառայություններ են մատուցում տանը, համակարգը կգրանցի նրանց գտնվելու վայրը: Եթե նրանք ծառայություններ են մատուցում համայնքում (օրինակ՝ մթերային գնումներ

կատարելիս և այլն), ապա համակարգը **ՁԻ** ֆիքսելու նրանց գտնվելու վայրը: Կալիֆոռնիայի և դաշնային կառավարության փոխգիշման արդյունքում համակարգը միայն կգրանցի ծառայությունների գտնվելու վայրը, երբ իր հաճախորդի հետ **չբնակվող** մատակարարը ծառայություններ է մատուցում հաճախորդի տանը: Գնահատման գործընթացում նահանգին տրվում է հաճախորդի տան հասցեն՝ IHSS-ի հաճախորդ դառնալու համար, ուստի ոչ մի լրացուցիչ անձնական նույնականացնող տվյալներին չեն հետևելու:

Ինչո՞ւ է Կալիֆոռնիան փոխում ներկայիս այցելությունների էլեկտրոնային ստուգման համակարգը:

Դաշնային օրենքը պահանջում է, որ EVV համակարգերը էլեկտրոնային եղանակով գրանցեն IHSS/WPCS այն մատակարարների գտնվելու վայրը, որոնք **չեն ապրում** հաճախորդների տանը՝ յուրաքանչյուր աշխատանքային օրվա սկզբում և վերջում՝ ապահովելով, որ հաճախորդները ստանան իրենց տնային խնամքի ծառայությունները՝ իրենց տանը: Ներկայումս համակարգը չի պահանջում ծառայության սկզբի, ավարտի ժամի և գտնվելու վայրի գրանցումը իրական ժամանակում: Կալիֆոռնիան պետք է թարմացնի ներկայիս EVV համակարգը, որպեսզի համապատասխանի դաշնային օրենքին, հակառակ դեպքում նահանգի ֆինանսական տույժերը կշարունակեն կիրառվել դաշնային կառավարության կողմից:

Ի՞նչ շահերի պաշտպանությամբ է հանդես եկել միությունը EVV-ի վերաբերյալ:

Իր ընդունումից ի վեր Local 2015-ը միացել է մեր եղբայրներին ու քույրերին՝ հաշմանդամության իրավունքների և խնամք ստացողների շահերի պաշտպանության համայնքներում՝ ապահովելով, որ EVV-ի համակարգը լինի հնարավորինս նվազագույն ինվազիվ և ունենա նվազագույն ծանրաբեռնվածություն: Արդյունքում՝ Կալիֆոռնիան ներդրեց մի համակարգ, որը և՛ մատակարարները, և՛ ստացողները կարծում էին, որ կառավարելի է և պաշտպանում էր անհատների գաղտնիության իրավունքները: Մենք շարունակում ենք համագործակցել CDSS-ի և փաստաբանների հետ այս գործընթացի ընթացքում, որպեսզի մեր նահանգը համապատասխանեցվի դաշնային օրենքին այնպես, որ չվնասի մատակարարին կամ հաճախորդին:

Ո՞ւրից է պահանջվում համապատասխանել EVV-ին:

Միայն IHSS/WPCS մատակարարներից, ովքեր **ՁԵՆ** բնակվում իրենց հաճախորդի հետ:

Ինչպե՞ս է նահանգը տեղեկանում, որ խնամակալը հաճախորդի հետ է բնակվում:

CDSS-ն գիտի, թե որ խնամակալն է բնակվում իր խնամք ստացողի հետ՝ հիմնվելով այն տվյալների վրա, որ խնամակալը լրացրել է SOC 2298 ձևաթղթում: Մատակարարը կարող է իրեն նույնականացնել որպես իր հաճախորդի հետ բնակվող խնամակալ՝

յուրաքանչյուր վճարման ժամանակաշրջանի սկզբում՝ ESP-ի միջոցով կամ ձևը ներկայացնելով իրենց շրջանի IHSS-ի գրասենյակ:

Եթե հաճախորդի հետ չբնակվող մատակարարը ծառայություններ է մատուցում ինչպես տանը, այնպես էլ համայնքում, ինչ գործընթաց է իրականացվում համակարգ մուտք գործելու և դուրս գալու համար:

Միակ ժամանակը, երբ իր հաճախորդի հետ **չբնակվող** մատակարարը պետք է բացահայտի, թե որտեղ է գտնվում, դա այն ժամանակն է, երբ նա մուտք է գործում համակարգ և դուրս է գալիս համակարգից: Եթե նրանք գտնվում են համայնքում, երբ սկսում են իրենց հերթափոխը, նրանք դա կնշեն համակարգ մուտք գործելիս, և եթե ավարտում են իրենց հերթափոխը հաճախորդի տանը, նրանք կնշեն, որ տանն են: Կիրառվում է նաև հակառակը: Համակարգը ֆիքսում է գտնվելու վայրը միայն այն ժամանակ, երբ անհատը մուտք է գործում և դուրս է գալիս համակարգից յուրաքանչյուր հերթափոխի սկզբում և վերջում:

Արդյո՞ք իմ աշխարհագրական դիրքը կգրանցվի, երբ ես մուտք գործեմ համակարգ համայնքում գտնվելիս:

Աշխարհագրական դիրքը կգրանցվի միայն այն դեպքում, երբ իր հաճախորդի հետ **չբնակվող** մատակարարը մուտք է գործում կամ դուրս է գալիս համակարգից՝ հաճախորդի տանը: Աշխարհագրական դիրքը **Չի** ֆիքսվի, երբ մատակարարը մուտք է գործում կամ դուրս է գալիս համակարգից համայնքում գտնվելիս:

Ե՞րբ են իրականացվելու EVV-ի այս փոփոխությունները:

EVV-ի ընթացիկ համակարգի այս փոփոխությունները ամբողջությամբ կկիրառվեն Կալիֆոռնիայում 2023 թվականի հուլիսի 1-ից և կկիրառվեն բոլոր մատակարարների համար, ովքեր չեն բնակվում իրենց հաճախորդների տանը:

Ես խնամակալ եմ և ապրում եմ իմ հաճախորդի հետ: Պե՞տք է արդյոք համապատասխանեմ EVV-ի կանոններին:

Ո՛ր: Իրենց հաճախորդների տանը բնակվող խնամակալներից պահանջվում է միայն զեկուցել յուրաքանչյուր աշխատանքային օրվա և ընդհանուր ժամերի մասին իրենց ժամաթերթիկներում:

Ես խնամակալ եմ և ապրում եմ իմ հաճախորդի հետ: Արդյո՞ք պետք է փոխեմ իմ ժամաթերթիկը լրացնելու ձևը:

Ո՛ր:

Ինչպես կարող եմ ինձ նշել որպես հաճախորդի հետ բնակվող խնամակալ:

Էլեկտրոնային ծառայությունների պորտալը և հեռախոսային ժամանակացույցի համակարգը ինքնաբերաբար կբացառեն բոլորին, ովքեր նշել են, որ ապրում են իրենց հաճախորդի հետ՝ ներկայացնելով IHSS և WPCS Ծրագրի «Live-In Self Certification» (SOC 2298) ձևը, և ձեզնից ոչ մի գործողություն չի պահանջվի: Եթե դուք բնակվում եք խնամք ստացող հաճախորդի հետ և չեք լրացրել SOC 2298 ձևը, կարող եք մուտք գործել ESP, սեղմել “Financial” ներդիրը և լրացնել այն կամ կարող եք լրացնել CDSS-ի կայքում տեղադրված թղթային ձևի միջոցով՝ հետևյալ հղումով.

<https://www.cdss.ca.gov/cdssweb/entres/forms/English/SOC2298.pdf>

Կարող եք նաև կապվել ձեր շրջանի IHSS գրասենյակի հետ՝ կրկնօրինակը խնդրելու համար:

Արդյո՞ք կառավարությունը կհետևի իմ գտնվելու վայրին և տեղաշարժերին:

Աշխարհագրական վայրը կգրանցվի միայն այն ժամանակ, երբ իր հաճախորդի հետ **չբնակվող** մատակարարը մուտք է գործում և դուրս է գալիս հաճախորդի տնից: Եթե համակարգ մուտք գործելիս կամ համակարգից դուրս գալիս մատակարարը նշում է, որ գտնվում է կամ աշխատում է «համայնքում», ոչ մի տեղ չի ֆիքսվում նրա գտնվելու վայրը:

Ի՞նչը այն չէ ներկայիս համակարգի հետ: Ինչո՞ւ է համակարգը փոխվում՝ ներառելով GPS:

Հիմնվելով IHSS-ի մեր շահագրգիռ կողմերի արձագանքի վրա՝ GPS չօգտագործելու վերաբերյալ, CDSS-ը ծրագիր է ներկայացրել Medicare/Medicaid ծառայությունների դաշնային կենտրոններին (CMS), որը պահանջում է մատակարարներից իրենց գտնվելու վայրը մուտքագրել էլեկտրոնային համակարգ, այլ ոչ թե օգտագործել GPS: Այնուամենայնիվ, CMS-ն այժմ որոշել է, որ մեր ընթացիկ գործընթացը չի համապատասխանում դաշնային պահանջին, ըստ որի՝ իր հաճախորդի հետ **չբնակվող** մատակարարի գտնվելու վայրը պետք է էլեկտրոնային եղանակով ֆիքսվի ծառայությունների մատուցման սկզբում և վերջում: 2021 թվականի հունվարի 1-ից Կալիֆոռնիան ֆիսկալ տույժ է վճարում՝ դաշնային օրենքին չհամապատասխանելու պատճառով:

Ինչպես կարող եմ ներբեռնել IHSS EVV բջջային հավելվածը:

Մատակարարները կարող են անվճար ներբեռնել IHSS EVV բջջային հավելվածը իրենց հեռախոսում, որպեսզի հեշտությամբ գրանցվեն իրենց աշխատանքային հերթափոխի սկզբում և վերջում: iPhone-ի օգտագործողների համար հավելվածը գտնվում է նրանց

Apple App Store-ում: Android օգտատերերի համար հավելվածը գտնվում է Google Play-ում: Հավելվածները հասանելի կլինեն արդեն 2023 թվականի հունիսին:

Ի՞նչ կլինի, եթե մոռանամ մուտք գործել կամ դուրս գալ համակարգից կամ սխալ անեմ:

Մատակարարները կկարողանան վերանայել և ուղղել իրենց ժամերը, նախքան դրանք հաստատման ներկայացնելը, ճիշտ այնպես, ինչպես կարող են այսօր անել:

Ես չունեմ սմարթֆոն/խելացի հեռախոս: Ինչպե՞ս կարող եմ մուտք գործել բջջային հավելված:

Բջջային հավելվածը հասանելի կլինի ցանկացած սարքի միջոցով, որը կարող է հավելվածներ ներբեռնել, ներառյալ ձեր պլանշետը: Մատակարարները կարող են նաև հեշտությամբ մուտք գործել և դուրս գալ համակարգից իրենց տնային համակարգչի միջոցով՝ էլեկտրոնային ծառայությունների պորտալում կամ հեռախոսային ժամանակացույցի համակարգի միջոցով:

Ես չունեմ սմարթֆոն կամ համակարգիչ: Ինչպե՞ս կարող եմ մուտք գործել և դուրս գալ համակարգից:

Մատակարարները դեռևս կկարողանան մուտք գործել և դուրս գալ համակարգից հեռախոսային ժամանակացույցի համակարգի (TTS) միջոցով: IHSS-ի TTS համակարգը փոփոխվում է՝ էլեկտրոնային եղանակով գտնվելու վայրը հաստատելու համար, երբ մատակարարը օգտագործում է ստացողի տան ֆիքսված հեռախոսը և զանգահարում է TTS՝ մուտք գործելու և դուրս գալու համար: Մուտք գործելու և դուրս գալու մասին տեղեկություններն ավտոմատ կերպով կլրացվեն մատակարարի էլեկտրոնային ժամաթերթում:

Իսկ եթե ես ճանապարհորդում եմ իմ հաճախորդի հետ, կարո՞ղ եմ ճանապարհորդել նահանգից դուրս:

Մատակարարին թույլատրվում է ճանապարհորդել Կալիֆոռնիայի ներսում և նահանգից դուրս՝ իրենց հաճախորդի հետ: Ճանապարհորդելիս մատակարարը պետք է ընտրի «համայնքը»՝ համակարգ մուտք գործելու և դուրս գալու ժամանակ:

Իսկ եթե ես աշխատում եմ մի քանի հաճախորդների հետ:

Ամեն օր ձեզանից կպահանջվի մուտք գործել և դուրս գալ համակարգից բոլոր հաճախորդների համար, որոնց հետ աշխատում եք: Սկսելու և ավարտելու ժամերը կարող են համընկնել: Դուք պետք է նաև համոզվեք, որ յուրաքանչյուր հաճախորդի

համար ֆիքսում եք ամեն օր աշխատած ժամերի քանակը ճիշտ այնպես, ինչպես անում եք այսօր: Դուք դեռ պետք է ներկայացնեք ժամերի թերթիկը յուրաքանչյուր հաճախորդի համար, որի հետ աշխատում եք:

Արդյո՞ք EVV-ն մատակարարներից պահանջում է մուտք գործել և դուրս գալ օրվա ընթացքում յուրաքանչյուր կատարած ծառայության համար:

ՈՉ: Մատակարարները պետք է օրական միայն մեկ անգամ մուտք գործեն և դուրս գան համակարգից յուրաքանչյուր հաճախորդի համար, որի հետ աշխատում են:

Երբ մատակարարը սպասարկում է նոր հաճախորդին, որը մատակարարի պորտալի համակարգում չէ, ինչպե՞ս է մատակարարը գրանցվում կամ դուրս գալիս: Արդյո՞ք մատակարարի աշխարհագրական դիրքը կգրանցվի:

Մատակարարը կլրացնի իր ժամերը հետադարձ ուժով, ինչպես դա անում է ներկայումս: Աշխարհագրական դիրքը չի ֆիքսվի ժամերը հետադարձ ուժով լրացնելիս:

Ո՞րն է մատակարարի աշխարհագրական դիրքը գրանցելու և GPS-ով հետևելու միջև տարբերությունը:

EVV-ն կօգտագործի միայն աշխարհագրական դիրքը: GPS-ը իրական ժամանակում հետևում է անհատի գտնվելու վայրին և շարժումներին: Աշխարհագրական վայրը գրանցում է իր հաճախորդի հետ **չբնակվող** մատակարարի գտնվելու վայրի միայն այն ժամանակ, երբ նրանք գրանցվում են համակարգում հաճախորդի տանը:

Կարևոր է, թե ում սարքն է օգտագործում մատակարարը համակարգ մուտք գործելու և դուրս գալու համար:

Կարևոր չէ, թե որ սարքից կամ ում սարքից է մատակարարը մուտք գործում, քանի դեռ մատակարարն օգտագործում է իր սեփական հաշիվը:

Արդյո՞ք իմ աշխարհագրական դիրքը կգրանցվի համայնքում գրանցվելիս:

Հաճախորդի հետ չբնակվող մատակարարի աշխարհագրական դիրքը կգրանցվի միայն այն ժամանակ, երբ նրանք մուտք են գործում կամ դուրս են գալիս համակարգից՝ հաճախորդի տանը: Եթե մատակարարը մուտք է գործում և/կամ դուրս է գալիս համակարգից համայնքում գտնվելիս, նրա աշխարհագրական դիրքը Չի ֆիքսվի:

Սխալ թույլ տալու դեպքում կտուգանվե՞մ:

Ո՛ր: Նահանգի օրենքը պաշտպանում է IHSS մատակարարներին սխալ թույլ տալու համար տուգանելուց:

Հրահանգներում նշվում է, որ մատակարարը պետք է մուտք գործի համակարգ իր հերթափոխի սկզբում և դուրս գա հերթափոխի վերջում: Ի՞նչ կլինի, եթե հերթափոխը երկու օր է տևում:

Եթե մատակարարի հերթափոխը երկու օր է տևում, նրանք պետք է համակարգից դուրս գան կեսգիշերին և անմիջապես կրկին մուտք գործեն: DSS-ը ներկայումս փորձում է ավտոմատացնել այս գործընթացը՝ խնամքի մատակարարման խոչընդոտներից խուսափելու համար:

Ինչու՞ են իրենց հաճախորդի հետ բնակվող մատակարարներն ազատվում EVV-ի պահանջից:

Իրենց հաճախորդի հետ բնակվող մատակարարներն ազատված են EVV-ի պահանջից՝ դաշնային կառավարության կողմից տրված ուղեցույցի շնորհիվ:

Արդյո՞ք մատակարարի գտնվելու վայրը կգրանցվի, երբ նրանք ավելի ուշ ուղղեն իրենց ժամերը:

Մատակարարի գտնվելու վայրը չի ֆիքսվի, երբ նա հետադարձաբար լրացնում կամ խմբագրում է իր ժամերը:

Կարո՞ղ եմ օգտագործել իմ բջջային հեռախոսը՝ TTS-ի միջոցով գրանցվելու համար:

Մատակարարը կարող է օգտագործել միայն տան ֆիքսված հեռախոսը՝ TTS-ի միջոցով գրանցվելու համար:

Ինչպե՞ս կարող եմ գրանցվել համակարգում, եթե իմ հաճախորդը օգտագործում է և՛ WPCS-ի, և՛ IHSS-ի ծառայությունները:

Ներկայումս մատակարարները պետք է առանձին մուտք գործեն համակարգ՝ նույն խնամք ստացողին WPCS-ի և IHSS-ի ծառայություններ տրամադրելու համար: CDSS-ն հետազոտում է, թե ինչպես ավտոմատացնել այս գործընթացը:

Կարո՞ղ եմ գրանցվել TTS-ի միջոցով, եթե իմ տան հեռախոսը ծառայություններ է ստանում ինտերնետի կապի միջոցով, այլ ոչ թե ավանդական ֆիքսված կապով:

CDSS-ն այժմ ուսումնասիրում է այս հարցի պատասխանը:

Արդյո՞ք մատակարարները վճարվում են մուտք գործելու և դուրս գալու միջև ընկած ամբողջ ժամանակահատվածի համար:

Մատակարարները կվճարվեն միայն հաճախորդին ծառայություններ մատուցելու ժամանակի համար, ինչը ներկայիս պրակտիկան է: